Արձանագրություն N 3

Պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1 ծածկագրով Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 03-ը հունվարի 2024թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Դ. Մկրտումյան

Հանձնաժողովի անդամներ՝

Կոմիտեի պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության պետ՝ Գ. Աղաբաբյան (գնահատող),

Կոմիտեի հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի պետ-գլխավոր հաշվապահ՝ Հ. Սահակյան (գնահատող),

Կոմիտեի պետական գույքի օտարման բաժնի պետ՝ Ա.Գասպարյան (բացող)

Կոմիտեի իրավական ապահովման և դատական ներկայացուցչության բաժնի գլխավոր իրավաբան՝ Ն. Եդիգարյան (բացող):

Հանձնաժողովի քարտուղար՝

Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետ Լ. Գևորգյան:

«ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Armeps համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:
4. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
5. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու որոշման մասին
6. «ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 Ըստ **www.armeps.am** կայքի տվյալների՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար կնքել Երևան քաղաքի Տիգրան Մեծի 4 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	Մանուկյան Շին ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Armeps համակարգի միջոցով ներկայացված հայտերում հարվերով պահանջված փաստաթղթերի առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.1 **Armeps** համակարգի միջոցով ներկայացված Մանուկյան Շին ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտերում թերի են լրացված հրավերով պահանջվող (նախատեսված) **փաստաթղթեր՝ մասնավորապես**, Մանուկյան Շին ՍՊԸ -ի ներկայացրած հայտում հավելված 1.1-ը, ծավալաթերթ-նախահաշիվը լրացված են թերի, իսկ հավելված 1.2 բացակայում է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակիցների առաջարկած գները

3.1 « ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում **Armeps** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման արդյունքում մասնակիցների գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 *Երևան քաղաքի Տիգրան Մեծի 4 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ*		
	Գնման գինը՝ 45 653 100		
	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
Մանուկյան Շին ՍՊԸ	34 411 473 /երեսունչորս միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար չորս հարյուր յոթանասուներեք/	6 882 295 /վեց միլիոն ութ հարյուր ութսուներկու հազար երկու հարյուր իննսունհինգ/	41 293 768 /քառասունմեկ միլիոն երկու հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր վաթսունութ/

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

4.1 ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու որոշման մասին.

5.1 «ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով սույն արձանագրության 2.1 կետը և հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 41-րդ կետը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ Մանուկյան Շին ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև նիստի կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները, հակառակ դեպքում մերժել վերը նշված մասնակցի հայտերը հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 42-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0

5.2 «ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել Մանուկյան Շին ՍՊԸ-ին սույն որոշման մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0

6. «ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

6.1 Մանուկյան Շին ՍՊԸ -ն սահմանված ժամկետում ներկայացրել է համապատասխան տեղեկությունները:
6.2 «ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց.

- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝«ՊԳԿԿ-ԳՀԱՇՁԲ-2024/1-1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Մանուկյան Շին» ՍՊԸ-ին:
- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացույցային օր:
- Հրավերով սահմանված ժամկետում ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկ «Մանուկյան Շին» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Մկրտումյան .....

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Աղաբաբյան .....

Հ. Սահակյան .....

Ա. Գասպարյան .....

Ն. Եդիգարյան .....

Քարտուղար՝ Լ. Գևորգյան .....